

ԱՐԱՐԶԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԱՅԻՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ
ԵՎ ՍԿՋԲՆԱԳՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

ԱՍՏՂԻԿ ԳԵՂՈՐԳՅԱՆ

Հայերեն ձեռագիր Աստվածաշնչի նկարազարդումը կապվում է նրա վաղ շրջանի ընդօրինակությունների հետ և ուշագրավ պատմություն ունի։ Հայտնի են դեռևս V—VI դդ. մեզ հասած հունարեն աստվածաշնչեր, որոնց հին կտակարանների սկիզբը զարդարվել է արարչագործության պատկերներով։ Այդպիսիներից են V դ. Կոթոնի Աստվածաշունչը և VI դ. ընդօրինակված Վիեննայի Ազգային գրադարանի «Գիրք ծննդոցը», որից պահպանվել է 24 թերթ՝ 48 պատկերով։ Ուշագրավ են IX դ. մեզ հասած Տյուրի նկարազարդ աստվածաշնչի, որոնց «Գիրք ծննդոցը» սկսվում է արարչագործության տեսարաններով։

Հայերեն Աստվածաշնչի Հին Կտակարանի եթե ոչ առաջին թարգմանությունները, ապա հետագա դարերի ընդօրինակությունները նույնպես նկարազարդվել են։ Դրանց պատկերազրահան մանրամասների մասին առանձին ուսումնասիրություններ չեն գրվել, սակայն հայ և օտար գիտնականներից շատերն իրենց աշխատություններում, անդրադառնալով հայերեն աստվածաշնչերի պատկերազրույթություններին, դրանց ընդօրինակման սկզբնաղբյուրների վերաբերյալ հայտնել են տարբեր կարծիքներ¹։ Նրանցից յուրաքանչյուրը մատնանշում է առանձին մի ընդհանուր աղբյուր, սակայն քննությունը ցույց է տալիս, որ հայերեն Աստվածաշնչի նկարազարդումն ունի պատկերազրահական տարբերակներ, որոնց նախագաղափար օրինակը նույնպես եղել է տարբեր։

Մեր նպատակն է քննել հայերեն Աստվածաշնչի «Գիրք ծննդոցի»՝ Ադամին ու Եվային նվիրված պատկերաշարը։

Ուսումնասիրությունից պարզվում է, որ ա) հայերեն աստվածաշնչերում Ադամին ու Եվային վերաբերող պատկերազրույթունն ունի հինգ տարբերակ, բ) դրանցից յուրաքանչյուրն ունի իր սկզբնաղբյուրը, գ) յուրաքանչյուր տարբերակ ընդօրինակվել ու տարածվել է հայ գրչության տարբեր օջախներով։

Հայերեն Հին Կտակարանի նկարազարդված օրինակներ հայտնի են XIII դ.։ Դրանք մեծ մասամբ Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրեր են։

¹ А. А. Уваров, Эчмиадзинская библиотека (пятый археологический съезд в Тифлисе, 1879 г.), М., 1887; Тер-Мовсисян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, с. 132; Բ. Մարգարյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Վենետիկ, ս. Ղազար, 1914, էջ 27, А. Н. Свиряк, Миниатюра древней Армении, Л., 1939, с. 128; S. Der-Nersessian, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Washington, 1963, p. 84, Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ե, Անթիլիաս, 1951, էջ 21։

Այդպիսիք են Հովհաննես Արքանդոբ պատվերով ընդօրինակված աստվածաշնչերը², Նույն դարում է նկարադարձվել նաև Երզնկայի Աստվածաշունչը³:

Հիշված ձեռագրերում Հին Կտակարանի պատկերագրությունը սկսվում է ոչ թե Մենդոց դրքի բովանդակությանը համապատասխան նկարներով՝ արարչագործության տեսարաններով, այլ Մովսես մարգարեի դիմապատկերով, որտեղ վերջինս ներկայացված է որպես Մենդոց դրքի հեղինակ և անվանաթերթերի վրա նա պատկերված է այն գրելիս:

XIV դ. հատկապես բուն Հայաստանում ստեղծված աստվածաշնչերի Մենդոց գրքում տեսնում ենք պատկերագրական նոր հորինվածքներ: Դրանցում պատկերված են Ադամն ու Եվան դրախտում: Օրինակ՝ Գլաձորի մանրանկարիչ Թորոս Տարոնացին իր ընդօրինակած աստվածաշնչերից մեկում Մովսեսի պատկերի հետ մեկտեղ նկարել է Ադամին ու Եվային իմացության ծառի մոտ⁴: Նման պատկերներ առկա են նաև XIV դ. կիլիկյան մանրանկարիչ Սարգիս Պիծակի գործերում⁵ և նույն դարի Վասպուրականի մանրանկարիչ Զաքարիա Աղթամարցու ընդօրինակած Ճաշոցի լուսանցադարձերից մեկում⁶: Մեղսագործության տեսարանները մուտք գործեցին նաև XIV դ. շարականները⁷:

Ուշագրավ է, որ արարչագործության այս համառոտ շարքը փոքր-ինչ ընդարձակվում է Տաթևի և Վասպուրականի XIV—XVII դդ. մանրանկարներում՝ զետեղվելով ավետարանների տերունական նկարների շարքում: Օրինակ՝ մանրանկարիչ Անանուն Սյունեցու ծաղկած Ավետարանի⁸ էջերում ներկայացված են արարչագործության հետևյալ պատկերները, կենաց ծառի տակ պառկած Ադամի կողից ելնում է Եվան, որը ձեռքերը պարզել է դեպի Արարիչը, մեղսագործություն, դրախտից արտաքսում: Ծաղկող Սարգիս խիզանցին պատկերել է դրախտը, ապա՝ Ադամի ու Եվայի մեղսագործությունը և նրանց արտաքսումը դրախտից (նկ. 1): Նկարի տակ կա հետևյալ մականագրությունը. «Ադամ և Եվայն դէմ դրախտին կուլան»⁹:

Նման բովանդակություն է արտահայտված նաև XVII դ. ծաղկող Առաքել Գեղամեցու գործերում: Աստված Ադամի կողից ստեղծում է Եվային: Նկարի տակ մականագրված է. «Ուրբաթ աւուրն Ադամ ստեղծեց և Եվայ ի կողին քաշեց»¹⁰:

Վերը հիշված նկարիչներից յուրաքանչյուրն իր պատկերած նկարներում ցուցաբերել է ստեղծագործական ինքնատիպ մոտեցում՝ ոճական ուրույն առանձնահատկությամբ: Դրանք հայկական են և չի նկատվում որևէ օտար, կանոնական, մշակված պատկերագրություն ունեցող գաղափար—օրինակի առկայություն: Այստեղից էլ կարելի է ենթադրել, որ պատկերագրական տարբերակների այս պարզ շարքը ստեղծվել է Հայաստանում, Մեր այս ենթա-

² Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 345, 4243:

³ Երուսաղեմ, ս. Հակոբի մատենադարան, ձեռ. № 1925, 1219 ք.

⁴ Մատենադարան, ձեռ. № 353, ք. 7բ:

⁵ Նույն տեղում, ձեռ. № 2627, ք. 2բ:

⁶ Նույն տեղում, ձեռ. № 4370, ք. 116ա:

⁷ Նույն տեղում, ձեռ. № 2414, 2473:

⁸ Նույն տեղում, ձեռ. № 6305, ք. 11ա, 13բ, 14ա:

⁹ Նույն տեղում, ձեռ. № 6420, ք. 28ա:

¹⁰ Նույն տեղում, ձեռ. № 7634, ք. 7ա:

դրությունը հիմնավորվում է, երբ ժանոթանում ենք դրանց ակունքներին: Մենք ողջ գրքի պատկերազրական այս շարքը հայերին ժանոթ է եղել դեռևս X դ.: Դրանց հանդիսվում ենք Աղթամարի ս. Խաչ եկեղեցու որմնաքանդակներում: Տաճարի հյուսիսային ճակատի կենտրոնական հատվածի ներքևի մա-




Նկ. 1. Մատենադարան, ձեռ. № 6420, ք. 28ա:

սում կարելի է տեսնել Ադամին ու Եվային պատկերող քանդակը, իսկ պատուհանից աջ՝ Եվայի գայթակղության տեսարանը:

Արարչագործության երկրորդ տարբերակը հանդիպում է Ղրիմի XIV դ.

հայերեն Աստվածաշնչում¹¹։ Ձեռագիրն ընդօրինակվել է 1367—1371 թթ. Սուղտա-Սուրղաթում, որի Մենդոց գրքի արարչագործության տեսարանը տեղավորված է մեկ էջի վրա և ունի հետևյալ պատկերագրությունը. վերևի աջ անկյունում նստած է հայր Աստված, նրա առջևում հրեշտակներն են, ձախ



Նկ. 2. Մատենադարան, ձեռ. № 352, Բ. 1ա։

կողմում՝ աշխարհաստեղծման պատկերաշարը։ Նկարի կենտրոնական մասում հորիզոնական երեք շարքով պատկերված է Ադամի և Նվայի պատմությունը։ Առաջին շարքում՝ Ադամը դրախտում և Նվայի ստեղծումը նրա կողից, երկ-

¹¹ Նույն տեղում, ձեռ. № 352, Բ. 1ա։

րորդ շարքում՝ Ադամի ու Եվայի մեղսագործությունը, ապա՝ նրանք զգեստավորված, երրորդում՝ Աստված նրանց դուրս է անում դրախտից (նկ. 2)։ Պատկերման այս տարբերակը հիշեցնում է Աղթամարի զմբեթի ներսի որմնակարը, որը կատարված է նույն ոճով և համարվում է դրսի քանդակներին նկարը, որը կատարված է Նույն ոճով և համարվում է դրսի քանդակներին նկարը (X դ.)։ Ս. Տեր-Ներսեսյանը, նկարագրելով Աղթամարի որմնաժամանակակից (X դ.)։ Ս. Տեր-Ներսեսյանը, նկարագրելով Աղթամարի որմնաժամանակակից արարչագործության շարքը, եկել է այն եզրակացության, որ դա «...պատկանում է այնպիսի վերախմբավորման, որին մինչև այժմ չենք հանդիպել մեղ ծանոթ արևելյան քրիստոնեական օրինակներից որևէ մեկում»¹²։ Հեղինակը ձեռքի տակ ունենալով այդ որմնակարների նոր լուսանկարները, հայտնաբերել է զմբեթի թմբուկի վրա պահպանված նկարներ, որոնցում պարզ երևում են Ադամի ու Եվայի պատմությունը։ Ս. Տեր-Ներսեսյանը ուշադրություն է հրավիրում անսովածաշնչային պատկերազարդման վաղ խմբագրություններից մեկի՝ V դ. մեղ հասած հունարեն կոթոնի Աստվածաշնչի վրա, որտեղ Արարիչը Ադամի կողոսկրից հանում է Եվային և ինքն էլ դրախտից վտարում է նրանց, և ոչ թե հրեշտակը։ Կոթոնի Աստվածաշնչի պատկերազարդման այս տարբերակն աղբյուրվում է Ղրիմի Աստվածաշնչի հետ և հնարավորություն է տալիս մտածել, որ, հավանաբար, այդ ձեռագրի ընդօրինակման գաղափար—օրինակը եղել է հունարեն մի Աստվածաշնչում։

Հայերեն Մենդոց դրքի արարչագործության պատկերների երրորդ տարբերակն առաջին անգամ հանդիպում է Խալիսայի Բոլոնիա քաղաքում ընդօրինակված XIII դ. հայերեն Աստվածաշնչում¹³։ Ձեռագրի գրիչը, թերևս նաև նկարների հեղինակը, Առաքելն է։ Ձեռագրի Հին և Նոր Կտակարանների նկարազարդումները կատարված են մեծ վարպետությամբ։ Այս Աստվածաշնչը XIV դ. բերվել է դրիմահայ գաղթօջախ, և նշանավոր գրիչ Նատերի որդի Ստեփանոսն այն լրացրել է Նոր Կտակարանի մի քանի պատկերներով։ XV դ. ձեռագրի Հին Կտակարանի սկիզբը, այսինքն Մենդոց գիրքը (1—193 թերթերը), խիստ քայքայված լինելու պատճառով, հանձնարարվում է Կաֆայի ճանաչված նկարիչ Նիկողայոս Մելանավորին վերանորոգելու։ Վերջինս այդ էջերն ընդօրինակել է բնագրից։ Պետք է ենթադրել, որ ձեռագրի սկզբում եղել են Մենդոց դրքի արարչագործության պատկերները, որոնք նույնպես ընդօրինակվել են։ Այստեղից էլ կարելի է պատկերացնել, թե Բոլոնիայի հայերեն Աստվածաշնչի Մենդոց գիրքը ինչպիսի պատկերազարդություն է ունեցել։ Ամբողջ էջը հորիզոնական ուղղությամբ բաժանված է երեք շարքի. առաջին շարքում հայր Աստված բազմած է չորեքկերպյան աթոռին, իսկ նրա աջ և ձախ կողմերում հրեշտակներն են։ Երկրորդ շարքում պատկերված են Ադամն ու Եվան դրախտում, Եվայի՝ օձի հետ խոսակցող պահ, ապա՝ նրանք իրենց մերկությունը ծածկած։ Երրորդ շարքում՝ Աստված Ադամին ու Եվային արտաքսում է, և հրեշտակը նրանց դուրս է անում դրախտից։ Այս պատկերազարդությունը հարևանման է IX դ. Տյուրի նկարազարդ աստվածաշնչի արարչագործության պատկերներին¹⁴։ Արարչագործության նման ձևեր հանդիպում են նաև իտալական վերածնության շրջանի քանդակագործության մեջ։ Օրի-

¹² Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 109։

¹³ Մատենադարան, ձեռ. № 2705, Թ. 3բ։

¹⁴ H. L. Kessler, The Illustrated Bibles from Tours, New-Yersey, 1977. p. 1—4.

նական կարելի է տեսնել Բոլոնիայի XV դ. քանդակագործ Յակոբո Դելլա Կվերչայի կատարած Սան Պետրոնսո եկեղեցու խորաքանդակում, որտեղ դարձյալ հրեշտակն է Ադամին ու Եվային դուրս անում դրախտից¹⁵։ Ուշագրավ են նաև Օրվետի տաճարի Լորենցո Մատյանի կատարած որմնաքանդակները¹⁶։ Սակայն այստեղ ևս Աստված է Ադամին ու Եվային արտաքսում դրախտից։ Նշանակում է, պատկերագրական վերջին երկու տարբերակները կիրառվել են և՛ հունական, և՛ իտալական արվեստներում։ Պրագայի ս. Վիտա վանքում պահպանվել են XIV—XV դդ. լատիններեն աստվածաշնչեր, որոնց մենդոց գրքերի արարչագործական պատկերներն ունեն իտալական ծագում¹⁷։ Այս ամենից կարելի է ենթադրել, որ Ղրիմի հայ նկարիչներն օգտվել են թե՛ հունական, թե՛ իտալական օրինակներից։

Արարչագործության պատկերման նշված երկու տարբերակները հայ արվեստագետներն ընդօրինակեցին նաև հետագա դարերում։ Այդ նույն պատկերագրական ձևերին հանդիպում ենք Կ. Պոլսի XVII դ. հայերեն աստվածաշնչերում, Հակոբ Ակնեցու և մյուս մանրանկարիչների դործերում։ Ամենայն հավանականությամբ, Կ. Պոլսի աստվածաշնչերի գաղափար օրինակները բերվել են Ղրիմից։ Հայտնի է, որ XV դ. (1475 թ.) մեծ թվով ղրիմահայեր գաղթեցին Կ. Պոլիս և տեղի հայկական հին եկեղեցիներից մեկը՝ ս. Նիկողայոսը, տրվեց հայ գաղթականներին։ Անշուշտ, ղրիմահայերն իրենց հետ բերած կլիներին բազմաթիվ ձեռագրեր և տեղում ընդօրինակած՝ նաև նոր մատյաններ։ Այս երկու դպրոցների ներկայացուցիչները, շխատելով համատեղ, միմյանցից ընդօրինակեցին ու հարստացրին ձեռագրերի հարդարման արվեստը, որոնք իրենց ավանդները հասցրին XVII դ., ստեղծելով Կ. Պոլսի և Ղրիմի կենտրոնների համար Հին Կտակարանի պատկերագրման մի ընդհանուր ձև։

Պատկերագրության շորորոդ տարբերակն առաջին անգամ հանդիպում է 1619 թ. կվովում ընդօրինակված Ղազար Բաբերդացու Աստվածաշնչում¹⁸։ Այստեղ ևս ամբողջ հորինվածքը տեղավորված է մեկ էջի վրա, հորիզոնական և ուղղահայաց գծերով բաժանված չորս հավասար հատվածների։ Պատկերների այդպիսի դասավորության հանդիպում ենք XI դ. իտալական արվեստում, օրինակ, Պարմայի պալատական գրադարանի ավետարաններից մեկում¹⁹։ Նման ձևավորում հայկական ձեռագրերում կիրառվել է XIV դ., գրչության տարբեր կենտրոններում։

Նախքան Բաբերդացու Աստվածաշնչի մեզ հետաքրքրող պատկերին անդրադառնալը, մի երկու խոսք ձեռագրի նկարների հեղինակի մասին։ Մինչ այժմ Աստվածաշնչի բոլոր նկարների հեղինակը համարվել է Ղազար Բաբերդացին։ Վերջինս, սակայն, ձեռագրում հիշատակում է, որ իր վրձինն են պատկանում միայն որոշ նկարներ։ «Ծառու զսեալ գիրն Թորոս դպիր գրագրին

¹⁵ «Всеобщая история искусств», т. 3, М., 1962, рис. 43.

¹⁶ Նույն տեղում, նկ. 55ա, բ։

¹⁷ М. Костилкова, Иллюминированные рукописи собора св. Вита, Прага, 1975, рис. 91, 14, 161.

¹⁸ Մատենադարան, ձեռ. № 351, Բ. 3ր։

¹⁹ В. Н. Лазарев, История византийской живописи, т. 2, М., 1970, табл. 146—148.

և զոսկէ գիրն և զծաղկիսն և զամանս ի պատկերացն ես իմ հոգաւոր մատամբս գծագրեցի, որում ի մանկութենէս ի վեր խանդակաթ սիրով կու ցանկայի... այլ և զանազան գունով ծաղկեցի և զեղեցկանկար պատկերոք կերպագրել ետու և զանազան յորինուածօք շքեղացուցի զհոգիարարու Աստուածաշունչ մատենանս...»²⁰ Ուրեմն, պատկերագրական հորինվածքները հիմնականում կատարել է այլ նկարիչ, որի անունը չի հիշատակվել:

Բաբերդացու Աստվածաշնչում արարչագործությունը ներկայացված է հետևյալ տարբերակով. աշխարհաստեղծման առաջին շորս օրը, Ադամն ու Եվան դրախտում, մեղսագործություն, Նոյի տապանը, Այս Աստվածաշունչն ընդօրինակված է հիլոպական մի օրինակից, իսկ վերջինիս նախատիպը համարվում է Մայնց քաղաքում 1609 թ. հրատարակված Աստվածաշունչը, որի մանրանկարների հեղինակն է Թեոդոլդ Բրայը²¹, Ինչպես տեսնում ենք, լվովի այս ձեռագրի Մենդոց գրքի նկարների տարբերակը ոչ մի աղբյուր չունի նախորդների հետ, որոնց նախագաղափար օրինակները հայտնի էին ավելի վաղ ժամանակներից:

Բաբերդացու ձեռագրից կատարված ընդօրինակությունների հանդիպում ենք Նոր Զուղայի XVII դ. աստվածաշնչերում²², Հայագետ Բարսեղ Սարգիսյանը նկատելով այդ նմանությունը, կարծում է, թե Պարսկաստանում գրված անավարտ ձեռագիրը (№ 189) տարվել է Լվով և այնտեղ դրա մանրանկարներն ընդօրինակվել են Բաբերդացու ձեռագրից²³: Մինչդեռ, իրողությունն այն է, որ Բաբերդացու ձեռագիրն է բերվել Պարսկաստան, քանի որ դեռևս 1645 թ. այն արդեն Սպահանում էր և Աստվածատուր գրիչն ընդօրինակելով ձեռագիրը՝ այդ մասին թողել է հիշատակություն²⁴: Բարսեղ Սարգիսյանի հիշատակած ձեռագրի նկարազարդմանը, բացի ջուղայեցի նկարիչ Հայրապետից, մասնակցել են նաև նրա աշակերտները, իսկ պատկերներն ընդօրինակել է Աղափիրը: Հագիվ թե այս ամբողջ խումբը հնարավորություն ունենար Պարսկաստանից տեղափոխվել Լվով և ձեռագիր տանել այնտեղ նկարազարդելու: Վերջապես, Հայրապետն ու Աղափիրը 1648 թ. Նոր Զուղայում նկարազարդել են այլ ձեռագրեր ևս: Որ, իրոք, XVII դ. Նոր Զուղայում աստվածաշնչերն ընդօրինակվել են Բաբերդացու օրինակից, դրա լավագույն վկայություններից մեկն էլ Բաբերդացու կազմած Աստվածաշնչի ցանկի, հիշատակարանի և նրա «Ուտաւոր շափաբերական» տաղի ընդօրինակումն է Նոր Զուղայի աստվածաշնչերում²⁵:

Արարչագործության հինգերորդ տարբերակը հանդիպում է էջմիածնում ընդօրինակված 1686 թ. Աստվածաշնչում, որի ծաղկողներն են Մարկոս Պատկերահանը և Մաղաքիա Կոստանդնուպոլսեցին: Երկու նկարիչներին էլ էջմիածին էր հրավիրել Նղիազար կաթողիկոսը, որպեսզի նկարազարդեն

²⁰ Մատենադարան, ձեռ. № 351, Թ. 598բ (ընդգծումները մերն են—Ա. Գ.): Այդ մասին Գ. Հովսեփյանը գրում է. «...շատ շքեղ օրինակ է Ղազարոս Բաբերդացու Աստվածաշունչը, որ նկարազարդել է ավելի Լվովում, 1619 թվին» (նշվ. աշխ., էջ 18):

²¹ S. Der-Nersessian, նշվ. աշխ., էջ 84:

²² Մատենադարան, ձեռ. № 189, 201, 2725:

²³ Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 27:

²⁴ Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբանց, Ծրուսդեմ, 1973, № 6, էջ 475:

²⁵ Մատենադարան, ձեռ. № 189, էջ 603ա, 622բ և ձեռ. № 201, Թ. 569ա, 608ա:

4. Պոլսից բերված անավարտ Աստվածաշունչը²⁶։ Այս ձեռագրի Մենդոց գրքի պատկերադրությունը այլ հորինվածք ու ձևավորում ունի։ Երկու էջերում առանձին շրջանակների մեջ տեղավորված վեց նկարները շեն կրկնվում նախորդ տարբերակներից և ոչ մեկում։ Առաջին հինգ պատկերներում ներկայացված է արարչագործության հինգ օրը, իսկ վերջինում՝ միայն Ադամի ու Եվայի ստեղծումը։ Պատկերման այս եղանակը մեզ հանդիպած միակ օրինակն է, որի նախագաղափարը եղել է Ոսկան Երևանցու 1666 թ. Ամստերդամում հրատարակած հայերեն առաջին Աստվածաշունչը և որն, անշուշտ, իրենց ձեռքի տակ ունեցել են Մաղաբիա և Մարկոս նկարիչները։ Իսկ Ոսկան Երևանցու Աստվածաշունչի պատկերադրության համար, ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը, հիմք է հանդիսացել հոլանդերեն Աստվածաշունչը²⁷։

Այսպիսով, հայերեն աստվածաշնչերն ինչպես իրենց բովանդակությամբ, այնպես էլ դեղարվեստական հարդարման առումով ունեցել են տարբեր սկզբնաղբյուրներ։ Հստ այդմ, դրանք ունեն պատկերազարկան որոշակի տարբերակներ, որոնք ստեղծվել են հայ գրչության տարբեր օջախներում։

ВАРИАНТЫ И ИСТОЧНИКИ ИЗОБРАЖЕНИЯ СОТВОРЕНИЯ МИРА В АРМЯНСКОЙ МИНИАТЮРЕ

АСТХИК ГЕВОРКЯН

Резюме

Иллюстрирование армянских рукописных Библий имеет интересную историю и восходит к древнейшим, не сохранившимся до наших дней спискам. Анализ композиции, иллюстрирующей историю Адама и Евы из «Книги Бытия», показывает, что цикл изображений на эту тему в армянском искусстве имеет пять разных вариантов, которые как по содержанию, так и по своему художественному воплощению восходят к разным источникам. В отдельных очагах армянской письменности были распространены различные иконографические варианты этих изображений, которые и рассматриваются в данной статье.

²⁶ Նույն տեղում, ձեռ. № 349:

²⁷ Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 22: